Երևանից ձեզ լաւ գրքեր ուղարկեմ, հաւաքուել ամեն կիւրակէ եկեղեցոյ սենեակումը և կարդալ միասին»։ Ամենքը խօսք տուին և արդարև ես Երևանից Ռուսաստանի հայոց անունով յիսուն կտոր գրքեր, գլխաւորապէս ազգային վիպասանութիւններ, ուղարկեցի Մագու, որոնք հաւաքել էի զանազան անձնաւորութիւններից։

Տէրտէրը ինձ խորհուրդ տուեց, որ լաւ կը լինէր յորդորական մի թուղթ ևս ուղարկել եկեղեցումը կարդալու և ես ուղարկեցի նրանց իմ շրջաբերականը։

Այդ միջոցին, կարծես, ես լինէի ամենայն հայոց ընդհանուր Կաթողիկոսը։

«Լրագիրներ ստանո՞ւմ էք», հարցրի։

—"Մեզ նման ռամիկներին ի՞նչ է սազում գազէթ կարդալ" պատասխանեցին։

Նրանք կարծում էին, կան շատ բաներ, որ ռամիկները իրաւունք չունին վայելելու։

Լրագիրների վերայ խօսք բացուելիս, նոցանից մէկը հարցրեց, արդեօք ճանաչում էի ես Մշակ արքեպիսկոպոսին։

"Ի՞նչ Մշակ արքեպիսկոպոս" պատասխանեցի։

—"Նա որ գազէթ է գրում"—պատասխանեց Մագուեցին։

Հասկանալի էր որ "Մշակի" մեծ. խմբագրի համար էր. խօսքը։